

«5-րդ ԱԼԻՔ» ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N-3


Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՌՀ կողմից «5-րդ ալիք» հեռուստաընկերությանը համապատասխան գրությամբ ներկայացված «Հայլուր Կիրակի» լրատվական թողարկման ընթացքում առանձնացված արտահայտությունների ցանկը, արձանագրեց, որ հեռուստաընկերությունն իրականացրել է հանրությանն իրազեկելու իր կարևորագույն գործառույթը, և չնայած ռեպորտաժը պատրաստված է պամֆլետային ժանրի ոճով, այնուամենայնիվ, հաշվի առնելով առանձնացված արտահայտությունների հանրային բարոյականության և ընկալման տեսանկյունից խնդրահարույց լինելու հանգամանքը՝ դրսևորել է բարձր գիտակցություն, առանձնակի զգուշավորություն ցուցաբերելով

Հեղինակի կողմից հնչեցված և գրավոր տեքստով տեղադրված արտահայտությունների ընտրությանը

- Տեղադրված արտահայտությունների՝ Էկրանին Էրևալու ժամանակահատվածի նվազագույնին հասցնելու հանգամանքին
- Իրազեկել է հանրությանը ձեռնպահություն և զսպվածություն դրսևորել նշված արտահայտությունների կիրառության հարցում՝ այսպիսով նվազագույնի հասցնելով նաև նրանց խոցելիության աստիճանը:

Հանձնաժողովը նաև արձանագրեց, որ հեռուստաընկերությունը բանավոր նկատողություն է հայտարարել որոշակի արտահայտությունները չձածկելու մասով թերացում թույլ տված անձանց նկատմամբ և նրանց հորդորել է ապագայում ավելի զգույշ լինել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ



Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ